ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«10» հոկտեմբերի 2022 թվականի թիվ 631-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՄՐԻԻ ԽՃՈՒՂԻ ՇԵՆՔ 80, ԹԻՎ 1 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԳԱՐԻԿ ՀԱՅԿԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 144-Ա որոշումը.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի սեփականություն համարվող Գյումրիի խճուղի շենք 80, թիվ 1 բնակարանը՝ 56.98 /հիսունվեց ամբողջ իննսունութ հարյուրերրորդական / քառակուսի մետր ընդհանուր մակերեսով՝ ընդհանուր բաժնային իրավունքով, հավասար բաժիներով, նույն շենքի գույքի և հողամասի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքում համապատասխան բաժնեմասի հետ նվիրատվության կարգով նվիրել Գարիկ Հայկի մինասյանի չորս անձից բաղկացած ընտանիքի հետևյալ անդամներին.

   ինքը՝ Մինասյան Գարիկ Հայկի, ծնված 02.05.1970թ.
   կինը՝ Մինասյան Արմինե Մխիթարի, ծնված 13.05.1974թ.
   աղջիկը՝ Մինասյան Լիանա Գարիկի, ծնված 10.02.1997թ.
   տղան՝ Մինասյան Դավիթ Գարիկի, ծնված 27.01.1998թ.

2.Հանձնարարել.

ա) Ախուրյանի համայնքապետարանի ֆինանսական բաժնին, նվիրատվությունից հետո նշված բնակարանը դուրս գրել հաշվեկշռից:

բ) սեփականատիրոջը՝ համապատասխան փաստաթղթերներ ներկայացնել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շիրակի մարզային ստորաբաժանում գրանցում կատարելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

« 10» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

«11» հոկտեմբերի 2022 թվականի թիվ 632-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ «ԿԱՄՈՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 15-ի թիվ 38 որոշումը, որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Կամոյի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքը անհատույց, անժամկետ օգտագործման հանձնել համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 21102020-08-0023, տրված 21.10.2020 թվական, հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, համայնք Ախուրյան գյուղ Կամո 1-ին փողոց 14 մանկապարտեզ/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«20» հոկտեմբեր 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հոկտեմբերի 2022 թվականի N 633-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-077-0020-0016 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի ԹԻՎ 565-Ա ԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 624-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Մանվել Արամայիսի Մաթևոսյանը /ծնված 17.01.1958թ/ դիմել է Ախուրյան համայնքի ղեկավարին՝ իրեն ընտանիքին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0,15124 հա մակերեսով բնակավայրերի տնամերձ հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության ինքնակամ կառուցված շենքերը և շինություններն օրինականացնելու խնդրանքով: Շիրակի մարզի Մայիսյան գյուղի 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 12 հասցեի տնամերձ հողամասի վրա 2016-2017 թվականներին կառուցված բնակելի տան 7,44 քառակուսի մետր մակերեսով հատվածը, 39,66 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը, 40,52 քառակուսի մետր մակերեսով բնակելի օժանդակ շինությունը և 4,03 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով երկու պարիսպները համարվում են ինքնակամ կառույցներ, որոնք կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ կետի և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման կարգի 8, 10, 11, և 13 կետերի դրույթներով, ինչպես նաև

հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Մայիսյան գյուղի համար 0,0874 է, որոշում եմ՝

1. Քաղաքացիներ՝ Մանվել Մաթևոսյանին, Սիրվարդ Մաթևոսյանին, Խաչատուր Մաթևոսյանին, Գոռ Մաթևոսյանին, Սարո Մաթևոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան գյուղի 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 12 հասցեի տնամերձ հողամասի վրա 2016-2017 թվականներին կառուցված բնակելի տան 7,44 քառակուսի մետր մակերեսով հատվածը, 39,66 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, 40,52 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ շինությունը և 4,03 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով երկու պարիսպները սահմանված վճարների դիմաց ճանաչել օրինական:

   1) Սույն կետով օրինական ճանաչված ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման կարգի 13-րդ կետի ա) ենթակետով նախատեսված վճարը՝ 10000 Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օժանդակ շինությունների համար 6000 Հայաստանի Հանրապետության դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը՝ որը Մայիսյան գյուղի համար 16-րդ գոտում հաստատված է 0,0874:

   2) Հաշվարկված վճարը ինքնակամ կառուցված 7,44 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան հատվածի օրինականացման համար կազմում է 6503 (վեց հազար հինգ հարյուր երեք) Հայաստանի Հանրապետության դրամ, 84,21 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով ավտոտնակի, երկու պարիսպների և բնակելի օժանդակ շինության համար՝ 44160 (քառասունչորս հազար մեկ հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը օրինականացման վճարը կազմում է 50663 (հիսուն հազար վեց հարյուր վաթսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Որոշման ընդունման օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահին:

4. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրի տարածքում գտնվող 08-077-0020-0016 կադաստրային ծածկագրով հողամասի վրա առկա ինքնակամ կառուցված շենք շինություններն օրինականացնելու մասին» թիվ 565-Ա և սեպտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 24-ի թիվ 565-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 624-Ա որոշումները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«11» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հոկտեմբերի 2022 թվականի N 634-Ա

Գյուղ Ախուրյան

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-004-0029-0024 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՍԱՐԻԲԵԿԻ ԵՆԳՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾԱԾԿԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող կառույցների նկատմամբ պետական կամ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ, 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 3-րդ կետի և նույն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրյան բնակավայրում համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակավայրի այլ հող գործառնական նշանակության 0,01052 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված ծածկը և կից կառուցված հարթակը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին, հիմք ընդունելով Ախուրյանի համայնքապետարանում 2022 թվականի ապրիլի 12-ին մուտքագրված քաղաքացի Հայկանուշ Սարիբեկի Ենգոյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակավայրի այլ հող գործառնական նշանակության 08-004-0029-0024 կադաստրային ծածկագրով 0,01052 հեկտար մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 52,97 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով հասարակական

նշանակության ծածկը և կից կառուցված հարթակը ճանաչել օրինական, դրանք համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը:

2. Նշել, որ օրինական ճանաչված շինությունը՝

   ա) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում.

   բ) չեն խախտվում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը.

   գ) կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, այն կառուցված է քաղաքաշինական նորմերին և կանոններին համապատասխան և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Օրիանականացվող շինությունների պահպանման և սպասարկման համար 08-004-0029-0024 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված, 0,01052 հեկտար մակերեսով հատվածի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման:

4. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«11» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mail.ru , akhuryan.shirak@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ N 635-Ա
11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԻՐՈՒԾ ԳՐԻԳՈՐԻ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿՍՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ , ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ, 33.1-րդ, 34-րդ, 34.2-րդ կետերի, 35-րդ կետի «գ» ենթակետերի, 35.1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը՝ որը Ախուրյան գյուղի (Շիրակի մարզ, 14-րդ գոտի) համար 0,1209 է և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-007-0059-0012 կադաստրային ծածկագրով 0.00557 հեկտար

մակերեսով հողամասի վրա, քաղաքացի Սիրուշ Գրիգորի Թորոսյանի կողմից ինքնակամ կառուցված 77,64 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը և նույն ծավալի մեջ կառուցված նկուղը (հետագայում՝ շինություն) համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին և այն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 25-ի թիվ 518-Ա որոշմամբ ճանաչվել է օրինական, համարվել է համայնքի սեփականություն և անշարժ գույքի նկատմամբ համայնքի իրավունքները ենթարկվել են պետական գրանցման՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված շինությունը, ինչպես նաև դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, հողերի նպատակային նշնակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-007-0059-0012 կադաստրային ծածկագրով 0.00557 հեկտար մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարելու մասին գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի՝ Սիրուշ Գրիգորի Թորոսյանին:

2. Օրինական ճանաչված շինության և համապատասխան հողամասի համար սահմանել վաճառքի հետևյալ գներն ու պայմանները՝

1) Շինության վաճառքի գինը կազմում է՝ 93867 Հայաստանի Հանրապետության դրամ (77,64 քառակուսի մետր × 10000 դրամ × 0.1209 =93867):

2) Բնակելի նշանակության ինքնակամ շինության պահպանման և սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշնակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության մեկ քառակուսի մետր հողամասի կադաստրային արժեքը սահմանված է 1221 Հայաստանի Հանրապետության դրամ: 0.00557 հեկտար մակերեսով հողամասի օտարման գինը կազմում է՝ 68010 Հայաստանի Հանրապետության դրամ՝ 0,00557×1221դրամ=68010 Հայաստանի Հանրապետության դրամ:

3) Սահմանված չափերով ձևավորված կառույցի և հողամասի ուղղակի վաճառքի ընդհանուր գինը կազմում է՝ 161877 (հարյուր վաթսունմեկ հազար ութ հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարներին:

4) Որոշման սույն կետի 3-րդ ենթակետով ձևավորված վաճառքի ընդհանուր գնին հավելվում են տվյալ գույքային միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

5) Ինքնակամ շինություններն իրականացրած անձի կողմից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում գնման նախապատվության առաջարկը չընդունվելու կամ գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցների և դրանց համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գները չվճարելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է գրավոր առաջարկություն՝ կառույցը վարձակալելու վերաբերյալ:

6) Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից կառույցի վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն վաճառվում կամ օգտագործման է տրամադրվում հրապարակային սակարկություններով՝ աճուրդի կամ մրցույթի ձևով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

«11» հոկտեմբերի 2022 թվականի
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mail.ru , akhuryan.shirak@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ N 636-Ա
11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՍԱՐԻԲԵԿԻ ԵՆԳՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿՍՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾԱԾԿԸ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ, 33.1-րդ, 34-րդ, 34.2-րդ կետերի, 35-րդ կետի «գ» ենթակետերի, 35.1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը՝ որը Ազատան գյուղի (Շիրակի մարզ, 14-րդ գոտի) համար 0,1209 է և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի

հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-004-0029-0024 կադաստրային ծածկագրով 0.01052 հեկտար մակերեսով հողամասի վրա, քաղաքացի Հայկանուշ Սարիբեկի Ենգոյանի կողմից ինքնակամ կառուցված 52,97 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով հասարակական նշանակության ծածկը և կից կառուցված հարթակը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին և այն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 634-Ա որոշմամբ ճանաչվել է օրինական, համարվել է համայնքի սեփականություն և անշարժ գույքի նկատմամբ համայնքի իրավունքները ենթարկվել են պետական գրանցման՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված շինությունը, ինչպես նաև դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, բնակավայրերի հողերի նպատակային նշնակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-004-0029-0024 կադաստրային ծածկագրով 0.01052 հեկտար մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարելու մասին գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի՝ Հայկանուշ Սարիբեկի Ենգոյանին:

2. Օրինական ճանաչված շինության և համապատասխան հողամասի համար սահմանել վաճառքի հետևյալ գներն ու պայմանները՝

1) Շինության վաճառքի գինը կազմում է՝ 64041 Հայաստանի Հանրապետության դրամ՝ 52,97 քառակուսի մետր × 10000 դրամ × 0.1209 =64041):

2) Բնակելի նշանակության ինքնակամ շինության պահպանման և սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշնակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության մեկ քառակուսի մետր հողամասի կադաստրային արժեքը սահմանված է 1221 Հայաստանի Հանրապետության դրամ: 0.01052 հեկտար մակերեսով հողամասի օտարման գինը կազմում է՝ 128450 Հայաստանի Հանրապետության դրամ՝ 0,01052×1221դրամ=128450 Հայաստանի Հանրապետության դրամ:

3) Սահմանված չափերով ձևավորված կառույցի և հողամասի ուղղակի վաճառքի ընդհանուր գինը կազմում է՝ 192491 (մեկ հարյուր իննսուներկու հազար չորս հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարներին:

4) Որոշման սույն կետի 3-րդ ենթակետով ձևավորված վաճառքի ընդհանուր գնին հավելվում են տվյալ գույքային միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

5) Ինքնակամ շինություններն իրականացրած անձի կողմից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում գնման նախապատվության առաջարկը չընդունվելու կամ գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցների և դրանց համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գները չվճարելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է գրավոր առաջարկություն՝ կառույցը վարձակալելու վերաբերյալ:

6) Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից կառույցի վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն վաճառվում կամ օգտագործման է տրամադրվում հրապարակային սակարկություններով՝ աճուրդի կամ մրցույթի ձևով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

«11» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 637-Ա

<<12>> հոկտեմբերի 2022 թվական

գյուղ Ախուրյան

ԳԵՂԱՄ ՎԱՉԱԳԱՆԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 18-ի N 19-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի մարտի 02-ի N 365-Ա հրամանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի N 02.1//08028-2022 գրությունը և հիմք ընդունելով Գեղամ Վաչագանի Մաթևոսյանի դիմումը

որոշում եմ՝

1.Գեղամ Վաչագանի Մաթևոսյանի հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր որպես՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբանի /ծածկագիր՝ 2.3-11/ ժամանակավոր պաշտոնակատար:

2.Ժամկետային աշխատանքային պայմանագիրը կնքել 2022 թվականի հոկտեմբերի 12-ից մինչև թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

3. Աշխատավարձը՝ ըստ հաստիքացուցակի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

12 հոկտեմբերի 2022 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2022 թվականի N 638-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ԳՅՈՒՂԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 28 ՀԱՍՑԵԻ 08-037-0019-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արտաշես Հարությունի Հլղաթյանը (ծնված 25/11/1960 թվական) դիմել է Ախուրյան համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող 08-037-0019-0011 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,122895 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Երազգավորս համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի օգոստոսի 24-ի թիվ 6 որոշումով Արտաշես Հարությունի Հլղաթյանի ընտանիքի անդամների անվամբ սեփականաշնորհված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս գյուղի 4-րդ փողոց, թիվ 28 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված 146,8 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են 1984-1992 թվականներին, իսկ 70,73 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան հատվածը և 4,23 քառակուսի մետր մակերեսով պարիսպը կառուցվել են 2019-2020 թվականներին (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ կետի ա), բ) ենթակետերի, 22.1 կետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Երազգավորս գյուղի (Շիրակի մարզ, 17-րդ գոտի) համար 0,0743 է՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս գյուղի 4-րդ փողոց, թիվ 28 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված 146,8 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները ճանաչել օրինական՝ առանց վճարների գանձման:

2. Նույն հողամասի վրա 2019-2020 թվականներին ինքնակամ կառուցված 70,73 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան հատվածը և 4,23 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:

3. Որոշման 2-րդ կետով օրինական ճանաչված բնակելի տան յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 10000 Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օժանդակ շինությունների համար ահմանել 6000 Հայատանի Հանրապետության դրաա և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը՝ որը Երազգավորս գյուղի համար 17-րդ գոտում հաստատված է 0,0743: Ինքնակամ կառուցված 70,73 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան հատվածի օրինականացման վճարը կազմում է 52553 Հայաստանի Հանրապետության դրամ, 4,23 քառակուսի մետր մակերեսով պարսպի օրինականացման վճարը կազմում է 1886 Հայաստանի Հանրապետության դրամ: Ընդամենը օրինականացման վճարը կազմում է 54439 (հիսուն չորս հազար չորս հարյուր երեսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Որոշման ընդունման օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 3-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հոկտեմբերի 13-ին:

6. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«12» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան